1908

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«11» 06 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 168 - 25

Նախաձեռնող՝ ***ՇՄՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»***
ք. Երևան, Արմենակյան փ.129

Հիմանդրույթային փաստաթուղթ՝ ***«Հարավային ջրավազանային տարածքի 2025-2030թթ. կառավարման պլան»***
Սյունիքի մարզ

Առդիր՝ 20 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 168 - 25

«11» հունիսի **2025թ.**

«Հարավային ջրավազանային տարածքի 2025-2030 թթ. կառավարման պլան» հիմնադրույթային փաստաթղթի ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	ՇՄՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»
Փաստաթղթի տեսակը՝	Հիմնադրույթային փաստաթղթի նախագիծ/ ՌԷԳ հաշվետվություն
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ

Ներածական մաս. Հարավային ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030 թվականների կառավարման պլանը հանդիսանում է ջրավազանային կառավարման 2-րդ հնգամյա գործողության փաստաթուղթ, որը մշակվել է՝ համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 17-րդ հոդվածի, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» օրենքի 15-րդ հոդվածի, ԵՄ ջրի շրջանակային դիրեկտիվի և շրջակա միջավայրի նախարարի 27.01.2023թ. «Ջրավազանային կառավարման պլանի բովանդակությունը հաստատելու մասին» N26-Ն հրամանի պահանջների:

«Հարավային ջրավազանային կառավարման տարածքի համար ջրավազանային կառավարման պլանի»-ի նախագիծը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 4-րդ հոդվածով սահմանված հիմնադրույթային փաստաթուղթ է, որը Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի՝ «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N2294-Ն որոշման համաձայն ենթակա է ռազմավարական էկոլոգիական գնահատման:

Ջրավազանային կառավարման պլանի հիմնական բաղադրիչներն են՝

- ջրավազանային կառավարման տարածքի բնութագրում,
- ջրավազանային կառավարման տարածքի ջրային հաշվեկշիռ,

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ • ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER • ГОСУДАРСТВЕННЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսներ և պաշարներ,
- ջրավազանային կառավարման տարածքի ջրային մարմինների տարանջատում,
- էական ճնշումներ և ջրային մարմինների վրա հնարավոր ազդեցություններ,
- գետերի էկոլոգիական թողքի գնահատում,
- պահպանվող տարածքներ,
- ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանման, ջրապահպան գոտիներ, էկոտոն և անօտարելի գոտիներ,
- ջրավազանային կառավարման տարածքում ջրային ռեսուրսների մոնիտորինգ և ջրային մարմինների կարգավիճակի գնահատման արդյունքներ,
- ջրավազանի ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատում,
- ռիսկերի գնահատում և բնապահպանական նպատակներ:

Նկարագրական մաս. Հարավային ջրավազանային կառավարման տարածքը (այսուհետ՝ Հարավային ՋԿՏ) գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավում՝ Սյունիքի մարզում՝ ընդգրկելով մարզի տարածքն ամբողջությամբ: ՋԿՏ-ի մակերեսը կազմում է 4498.17 կմ^2: Այն ընդգրկում է Որոտան, Ողջի և Մեղրիգետ գետավազանները:

Որոտան գետը Զանգեզուրի տարածքում Արաքսի ամենախոշոր վտակն է: Այն սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի հյուսիս-արևմտյան և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի փոքր լճերից և աղբյուրներից ու ՀՀ սահմանից դուրս թափվում Արաքս գետ: Գետի ընդհանուր երկարությունը ՀՀ սահմաններում՝ 111 կմ է, ջրհավաք ավազանի ընդհանուր մակերեսը՝ 2596.81 կմ^2: Որոտան գետի ամենախոշոր վտակը Սիսիան գետն է: Որոտան գետ թափվում են Գորիս գետը և Քաշուն վտակները՝ ՀՀ սահմաններից դուրս:

Ողջի գետը Հարավային ՋԿՏ-ի երկրորդ խոշոր գետն է: Այն սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայի Կապուտջուղ լեռան լանջերի փոքր լճերից ու աղբյուրներից: Գետի ընդհանուր երկարությունը ՀՀ տարածքում՝ 52 կմ, իսկ ջրհավաք ավազանի մակերեսը՝ 1240.47 կմ^2:

Մեղրիգետի գետավազանի հիմնական գետը Մեղրիգետն է, որը սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի փոքր լճերից ու աղբյուրներից և Մեղրի քաղաքից ներքև թափվում է Արաքս գետ: Գետի երկարությունը 36 կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 336.3 կմ^2:

Հարավային ՋԿՏ-ում տեկտոնական խզվածքներն անցնում են Որոտանի հովտի՝ Գորայքից մինչև Լծեն ընկած հատվածով, Ողջի, Մեղրիգետ և Նռնաձոր գետերի հովիտներով: Այդ խզման հետ են կապված մի շարք աղբյուրների ելքեր (Զոր-զոր, Զույգաղբյուր, Կաթնաղբյուր, Յոթնաղբյուր, Մուխութույան, Շաքի և այլն): Հարավային ՋԿՏ-ի գետերի հունային և մերձհունային գոտիներում տարածված են չորրորդականի հասակի ալյուվիալ-պրոլյուվիալ փուխր բեկորային (գետաքար, գլաքար, խիճ, ավազ), գետալճային նստվածքները և ավազակավային առաջացումները:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՊԱՇԱՐՆԵՐ

Գետավազանի ջրային ռեսուրսներ, մլն. մ³	Գետավազաններ			Հարավային ՋԿՏ
	Որոտան	Ողջի	Մեղրիգետ	
Օգտագործելի ջրային ռեսուրսները				
Մակերևութային հոսք	418.65	205.78	74.56	698.99
Ստորերկրյա հոսք (աղբյուրային)	55.47 *	66.12*	25.95*	147.54*
Ընդամենը	**474. 12**	**271.90**	**100.51**	**846.53**
Ռազմավարական ջրային պաշարը				
Բնական լճերի ծավալի 1/3 մաս	3.2	0.20	0.05	3.45
Ջրամբարների մեռյալ ծավալի 2/3 մաս	23.1	2.34	-	25.44
Հաստատված և չհաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները*	111.54**	-	-	111.54
Ընդամենը	**137.84**	**2.54**	**0.05**	**140.43**
Ազգային ջրային պաշարը				
Բնական լճերի ծավալի 2/3 մաս	4.3	0.5	0.19	4.99
Ջրամբարների մեռյալ ծավալի 1/3 մաս	11.6	1.16	-	12.76
Ձնաբծեր և ֆիոնային դաշտեր	-	0.4	0.2	0.6
Ստորերկրյա ջրերի խորքային հոսք	252.17***	-	-	252.17
Ընդամենը	**268.07**	**2.06**	**0.39**	**270.52**
Էկոլոգիական թողք				
Ընդամենը	**223.09**	**110.53**	**17.66**	**351.28**

Հաշվի առնելով, որ վերջին տասնամյակում գետային հոսքի նվազում է տեղի ունեցել, ստորերկրյա ջրերի խորքային հոսքը նվազել է մոտ 8%-ով:

Ստորերկրյա ջրեր և ստորերկրյա ջրային մարմինների տարանջատում. Հարավային ՋԿՏ-ում տարանջատված ստորերկրյա ջրային մարմինների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով և հասանելի է

http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6 հղումով:

Ապագա ենթակառուցվածքների զարգացման համար ՀՀ Կառավարության գործունեության 2021-2026 թթ. ծրագրով՝ Սյունիքի մարզում նախատեսվում է 2025թ. սկսել Լիճքի ջրամբարի կառուցումը, որի նախագծահաշվարկային աշխատանքներն իրականացվել են 2022-2023թթ.:

Ջրամբարներ. 2023թ. հունվարի դրությամբ Հարավային ՋԿՏ-ում գործող 9 ջրամբարներն օգտագործվում են հիմնականում արդյունաբերության, ներառյալ՝ հիդրոէներգետիկ, ոռոգման ու ձկնաբուծության նպատակներով: Ջրամբարները հիմնականում տեղաբաշխված են գետերի միջին և ստորին հոսանքներում: Վարելահողերի հիմնական մասը գտնվում է ջրամբարներից վերև, ինչի պատճառով ոռոգելի վարելահողերը ջուրը ստանում են մեխանիկական եղանակով:

Ջրամբարաշինարարության հեռանկարային ծրագրի հայեցակարգով Հարավային ՋԿՏ-ում հատկորոշվել, ուսումնասիրվել և նախնական հետազոտվել է.

- Որոտանի գետավազանում 14 ջրամբար՝ մոտ 133.6 մլն. մ^3 ընդհանուր ծավալով,
- Ողջիի գետավազանում 8 ջրամբար՝ մոտ 73.9 մլն. մ^3 ընդհանուր ծավալով,
- Մեղրիգետի գետավազանում 10 ջրամբար՝ մոտ 11.8 մլն. մ^3 ընդհանուր ծավալով:

Նախատեսվում է Որոտանի գետավազանում կառուցել 8, իսկ Ողջիի գետավազանում՝ 10 ջրամբար:

Ջրամբարաշինարարության հեռանկարային ծրագրի հայեցակարգի իրականացումը Հարավային ՋԿՏ-ի գետավազաններում կստեղծի լրացուցիչ հզորություններ՝ շուրջ 219.4 մլն. մ^3 ջուր ամբարելու համար, ինչն իր հերթին հնարավորություն կտա ավելացնել ջրային հոսքի կարգավորման հնարավորությունները և լուծել մի շարք ռազմավարական խնդիրներ:

Ջրանցքներ և թունելներ. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և Սյունիքի մարզպետարանի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ Հարավային ՋԿՏ-ում գործում են 50-ից ավել մեծ և փոքր ջրանցքներ՝ ապահովելով մոտ 1396.1 հա հողատարածքների ոռոգումը: Խոշոր ջրանցքներն են՝ Սպանդարյանի, Որոտանի և Անգեղակոթի ջրանցքները:

Ըստ ՀՀ ՏԿԵՆ, Ջրային կոմիտե, 2023թ-ի տվյալների՝ ջրանցքներում ջրակորուստները՝ համակարգի խիստ մաշվածության պատճառով կազմում են 25-50 %:

Հարավային ՋԿՏ-ի միակ խոշոր ստորգետնյա ջրատարը Որոտան-Արփա թունելն է, որով նախատեսվում է Սպանդարյանի ջրամբարից տարեկան 165 մլն. մ^3 ջրի տեղափոխում Կեչուտի ջրամբար: Թունելի երկարությունը 21.6 կմ է, իսկ նախագծային ջրթողունակությունը՝ 15 մ^3/վրկ:

Գեղի ջրամբարը գտնվում է Գեղի գյուղի մոտ, Ողջի գետի ձախափնյա Գեղիի վտակի վրա: Ջրամբարի պատվարը ճալաքարակոպճային է, ավազակավային միջուկով, ունի 70 մետր բարձրություն և 244 մետր երկարություն, կատարային մասում՝ 10 մետր: Պատվարի շրջանում ֆիլտրացիոն երևույթների կանխման նպատակով 20-60 մետր խորության սահմաններում կատարվել են ցեմենտացման աշխատանքներ: Ջրամբարի ընդհանուր

ծավալը 15 մլն մ^3 է:

Գեղիի ջրամբարը հանձնվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին, որը չի պահպանում ջրամբարի ռեժիմը և ջրամբարից ջրի անկանոն բացթողումներ է իրականացնում: Անհրաժեշտ է պահպանել ջրամբարների ռեժիմների կարգավորումը, ինչի համար միջոցառումների ծրագրով առաջարկվել է ջրամբարի բացթողումների ռեժիմի կարգավորման միջոցառում:

Ջրհան կայաններ. ըստ ՀՀ ՏԿԵՆ, Ջրային կոմիտեի տեղեկատվության 2023թ. հունվարի դրությամբ Հարավային ՋԿՏ-ում գոյություն է ունեցել 50 ջրհան կայան, որից գործել է մոտ 30, իսկ մնացածն ամբողջովին կամ մասնակի քանդված են և վերազինման կարիք ունեն: Հարավային ՋԿՏ-ի ջրհան կայանների սպասարկման տակ են գտնվում մոտ 5000 հա վարելահողեր:

Հարավային ՋԿՏ-ի ջրհան կայանները սպասարկվում է «Սյունիք» ՋՕԸ-ի կողմից: Պոմպերի էլեկտրաէներգիայի մեծ ծախսի պատճառով 1 հա տարածքի ոռոգման արժեքը բավականին բարձր է: Այդ իսկ պատճառով պոմպերի ծախսի վճարման համար ՋՕԸ-ն ֆինանսական օժանդակություն են ստանում ՀՀ Կառավարությունից: Էլեկտրական պոմպերն, ընդհանուր առմամբ, հնամաշ են և մասնակի քանդված, որի արդյունքում ջրհան կայանները աշխատում են ոչ լրիվ հզորությամբ: Հարավային ՋԿՏ-ի բոլոր ջրհան կայանները արդիականացման կարիք ունեն:

Աղտոտման կետային աղբյուրներ. ըստ փորձագիտական գնահատականի՝ քաղաքային բնակավայրերի արտանետումների ընդհանուր մասնաբաժինը Ողջիի և Մեղրիգետի գետավազանների դեպքում կազմում է շուրջ 83 %, իսկ Որոտանի գետավազանում՝ 50 %: Քաղաքային կեղտաջրերի զգալի մասը կոյուղու ցանցով հոսում է անմիջապես հարակից գետը և չի անցնում մաքրում՝ կեղտաջրերի մաքրման կայանների բացակայության պատճառով: Կետային աղբյուրներից քաղաքային կեղտաջրերը էական ճնշում են գործադրում Որոտան գետի՝ Սիսիան քաղաքից մինչև Շամբի ջրամբար, Սիսիան գետի՝ Տոլորսի ջրամբարից մինչև գետաբերան, Գորիս գետի՝ Գորիս քաղաքում, Ողջի գետի՝ Քաջարան և Կապան քաղաքներում, Վաչագան գետի՝ Կապան քաղաքից մինչև գետաբերան, Մեղրիգետի՝ Մեղրի քաղաքից մինչև գետաբերան, Կարճևան գետի՝ Ագարակ քաղաքից մինչև գետաբերան ընկած հատվածները:

Աղտոտման ցրված աղբյուրներ. ջրային ռեսուրսների ցրված աղտոտման աղբյուրներ են հանդիսանում գյուղատնտեսությունը, հանքարդյունաբերությունը, տրանսպորտը, կոշտ թափոնները:

Գյուղատնտեսություն. Հարավային ՋԿՏ-ում գյուղատնտեսությունը հանդիսանում է հիմնական տնտեսական գործունեության ոլորտը: Ջրավազանի տնտեսության ընդհանուր ծավալում գյուղատնտեսությունը կազմում է 23.8 %: Փաստացի ոռոգվում է ընդհանուր ոռոգելի հողերի միայն 25.9 %-ը. հողատարածքի ոռոգումն իրականացվում է «Սյունիք» ՋՕԸ-ի կողմից:

Հարավային ՋԿՏ-ում գյուղատնտեսական հիմնական ճյուղերից է անասնապահությունը:

Այստեղ գյուղատնտեսական հողերի գրեթե կեսը (մոտ 47 %) կազմում են արոտավայրերը:

Ձկնաբուծություն. Հարավային ՋԿՏ-ում ձկնաբուծությունը թույլ է զարգացած: 2023թ. հունվարի 1-ի դրությամբ ձկնաբուծության նպատակով ջրառը, ըստ գործող ՋԹ-ների, կազմել է 7.38 մլն. մ^3՝ միայն Որոտանի գետավազանում: Ողջիի և Մեղրիգետի գետավազաններում ձկնաբուծության նպատակով ջրառ չի իրականացվել:

Հարավային ՋԿՏ-ի ձկնաբուծարանները հիմնականում փոքր չափի են (զբաղեցնում են մինչև 1 հա տարածք), գտնվում են գետահովիտներում:

Հարավային ՋԿՏ-ում ըստ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023թ. օգոստոսի 1-ի դրությամբ թույլտվություն ունի 59 ՓՀԷԿ, որոնցից 55-ը գործող է, 4-ը՝ կառուցվող: Ինչպես նաև Որոտան գետի վրա «Որոտանի կասկադ»-ի 404.2 Մգվտ գումարային հզորությամբ 3 գործող մեծ ՀԷԿ:

Հիդրոէներգետիկ նպատակով 2023թ. նոյեմբերի 1-ի դրությամբ Հարավային ՋԿՏ-ում ջրառը կազմել է 2670.2 մլն. մ^3, որից 79.6 %-ը բաժին է ընկնում Որոտանի գետավազանին, 18.4 %-ը՝ Ողջիի գետավազանին, իսկ 2.0 %-ը՝ Մեղրիգետի գետավազանին:

Հարավային ՋԿՏ-ում հիդրոէներգետիկ նպատակով ջրօգտագործման մոտ 53.3 %-ը իրականացվում է Որոտանի ՀԷԿ-երի համալիրի, 3 խոշոր ՀԷԿ-երի, իսկ մնացածը՝ 46.7 %-ը 55 ՓՀԷԿ-երի կողմից: 2023թ. հունվարի 1-ի դրությամբ Որոտանի գետավազանում գործող և կառուցվող ՀԷԿ-երի քանակը կազմում է 42, որից մեկը՝ կառուցվող:

Որոտան գետի և վտակների վրա գործող ՀԷԿ-երի ընդհանուր հզորությունը կազմում է մոտ 453.4 ՄՎտ հզորություն: Օգտագործվում է Որոտանի գետավազանի գետերի հիդրոէներգետիկ պոտենցիալի մոտ 92 %-ը: Որոտանի գետավազանի գետերը ՀԷԿ-երով ծանրաբեռնված են:

Ողջի գետավազան. 2023թ. հունվարի 1-ի դրությամբ Ողջի գետավազանում գործող և կառուցվող ՀԷԿ-երի ընդհանուր քանակը կազմում է 15, որից Ողջի և Ծավ գետերի վրա, իրենց վտակների հետ միասին, գործում են 9-ը, իսկ կառուցվում՝ 2-ը: Մնացած 4 ՀԷԿ-երը գտնվում են խմելու ջրագծերի վրա, որոնցից 3-ը գործող են, իսկ 1-ը՝ կառուցվող:

Ողջիի գետավազանի գետերի վրա գործող և կառուցվող ՀԷԿ-երի ընդհանուր հզորությունը կազմում է մոտ 51.7 ՄՎտ՝ 123.8 մլն. կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրանքով: Ներկայումս օգտագործվում է Ողջիի գետավազանի գետերի հիդրոէներգետիկ պոտենցիալի մոտ 93%-ը: Ողջիի գետավազանի գետերը ՀԷԿ-երով ծանրաբեռնված են:

Մեղրիգետի ավազան. Մեղրիգետի գետավազանի հիդրոէներգետիկ պոտենցիալը գնահատվել է միայն Մեղրիգետի և Կարճևան գետերի համար: Մեղրիգետից դեպի արևելք ընկած Արաքս գետ թափվող փոքր գետերի հիդրոէներգետիկ պոտենցիալը չի հաշվարկվել՝ պայմանավորված գետերի ժամանակավոր հոսքով: 2023թ. հունվարի 1-ի դրությամբ Մեղրիգետի գետավազանում գործող ՀԷԿ-երի ընդհանուր քանակը կազմում է 5 հատ: Մեղրիգետի գետավազանի գետերի վրա գործող ՀԷԿ-երի ընդհանուր հզորությունը կազմում է մոտ 12.5 ՄՎտ՝ 25.1 մլն. կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրանքով:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Օգտագործվում է Մեղրիգետի գետավազանի գետերի հիդրոէներգետիկ պոտենցիալի մոտ 32.5 %-ը: Մեղրիգետի գետավազանի գետերը ՀԷԿ-երով ծանրաբեռնված չեն:

Հարավային ՋԿՏ-ում գործող խոշոր և փոքր ՀԷԿ-երի ջրառի հետևանքով գետերի առանձին հատվածներում չի պահպանվում էկոլոգիական հոսքը, ինչը քանակական առումով ճնշում է գործադրում գետերի հետևյալ հատվածներում.

Արդյունաբերություն. Հարավային ջրավազանային կառավարման տարածքում տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է՝ 61.9 %:

Սննդի արդյունաբերություն. Հարավային ՋԿՏ-ում սննդի արդյունաբերության ձեռնարկությունները քիչ են և հիմնականում կենտրոնացված են Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան և Մեղրի քաղաքներում: Գերակշռում են հացի, կաթնամթերքի և մսամթերքի արտադրություններն, առկա են նաև պահածոների և հանքային ջրի արտադրություններ:

Ոչ սննդի արդյունաբերություն. 2023թ. նոյեմբերի դրությամբ Հարավային ՋԿՏ-ում գործող ոչ սննդի արդյունաբերության ձեռնարկությունների կողմից ջրօգտագործման (մոտ 2.0 մլն. մ^3) և ջրահեռացման (մոտ 0.05 մլն. մ^3) ծավալները փոքր են: Հարավային ՋԿՏ-ում ոչ սննդի արդյունաբերությամբ զբաղվող ձեռնարկություններից կարելի է նշել Սիսիանի «Բուատ» և «Վի Էյջ Սթոուն»՝ քարերի մշակում, Կապանի «Վայֆլ» ՍՊԸ-ն՝ կրաքարի արտադրություն, «Կապանի անտառտնտեսություն» ՓԲԸ-ն՝ փայտամշակում, «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ-ն՝ ավտոմասերի արտադրություն և վերանորոգում, ինչպես նաև մի շարք փոքր ձեռնարկություններ, որոնք արտադրում են կահույք, տրիկոտաժ և այլն: Հարավային ՋԿՏ-ում նույն ժամանակահատվածում գործել են մի քանի բենզալցակայաններ, ավտոմեքենաների լվացման և սպասարկման կետեր: Շատ քիչ քանակությամբ ջրահեռացում կատարվել է միայն ավտոլվացման սպասարկման կետերից:

Հանքարդյունաբերություն. Հարավային ՋԿՏ-ում շահագործման են հանձնված շուրջ 43 մետաղական և ոչ մետաղական հանքավայրեր: ՋԿՏ-ում հանքարդյունաբերական տարածքներն ընկած են հիմնականում Ողջիի և Մեղրիգետի գետավազաններում: Խոշոր հանքարդյունաբերողներն են՝ «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, «Լիճքվազ» ՓԲԸ և այլն: Հարավային ՋԿՏ-ում հանքարդյունաբերությունից հեռացվող ջրերը հանդիսանում են ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներից մեկը:

Հանքավայրեր. Հարավային ՋԿՏ-ում երկու տասնյակից ավելի բազմամետաղային հանքավայրեր կան, որոնցից շահագործման են հանձնված՝ Որոտանի գետավազանում՝ Մուցքի ոսկու հանքավայրը, Ողջիի գետավազանում՝ Քաջարանի, Շահումյանի և Հանքասարի պղնձամոլիբդենային հանքավայրերը և Մեղրիգետի գետավազանում՝ Ագարակի և Այգեձորի՝ պղնձամոլիբդենային, Լիճքվազ-Թեյի, Ոսկեձորի, Մեղրասարի, Մարջանի, Վերին Վարդանիձորի ոսկու հանքավայրերը:

Հարավային ՋԿՏ-ում առկա են 5 գործող (Արծվանիկ, Գեղանուշ, Դարազամի, «Հովիտ 1» և «Հովիտ 2»), 3 ռեկուլտիվացված (Ողջի, Փխրուտ, Դարազամիի (Դարա-Զամի, Դարաձոր, Քաջարան)) պոչամբարներ, 1 ռեկուլտիվացման ենթակա (Դաստակերտի) և 2 չգործող

պոչամբարներ (Այգեձորի, Հանքասարի):

Գործող պոչամբարներ. հարավային ՋԿՏ-ում գործող պոչամբարները գտնվում են Ողջիի և Մեղրիգետի գետավազաններում: Ամենամեծ պոչամբարն Արծվանիկի պոչամբարն է, որը շահագործվում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից: 2016թ-ի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխության (ներառյալ՝ արդյունահանման ծավալների փոփոխություն, ընդերքի տեղամասի ընդլայնում, թույլտվության ժամկետի երկարաձգում) ՇՄԱԳ-ի համաձայն՝ Արծվանիկ պոչամբարի առավելագույն հզորությունը ծովի մակերևույթից 1010 մ բարձրության դեպքում կկազմի 398 մլն. մ^3: Պոչամբար թափվող թափոնների տարեկան քանակը կազմում է մոտ 14 մլն տոննա՝ խառնված 40 մլն մ^3 ջրի հետ:

- Գեղանուշ գետի կիրճում գտնվող Գեղանուշի պոչամբարը պատկանում է Կապանի ԼՀԿ ՓԲԸ-ին: Պոչամբարի նախագծային ծավալը կազմում է 11.4 մլն. մ^3: 2023թ. դրությամբ փաստացի պոչամբարը լցված է 5.0 մլն. մ^3:
- Հանքասարի պղնձամոլիբդենային կոմբինատի 2 փոքր պարզարանները գտնվում են Գեղի գետի աջակողմյան վտակի վրա՝ Աջաբաջ բնակավայրից 2 կմ հարավ-արևելք, և միասին զբաղեցնում են 1.7 հա տարածք: Հանքասարի պոչամբարը 2023թ.-ի նոյեմբերի դրությամբ չի գործում և կոնսերվացված չի:
- «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն շահագործում է Դարազամի, «Հովիտ 1» և «Հովիտ 2» պոչամբարները: Պոչամբարի նախագծային ծավալները կազմում են Դարազամի 40.9 մլն. մ^3, Հովիտ-1 9.1 մլն. մ^3, Հավիտ-2 17.9 մլն. մ^3: Պոչամբարները համապատասխանորեն լցված են 38.6, 1.8 և 4.3 միլիոն մ^3:

Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից պոչամբարներ է տեղափոխվում տարեկան մոտ 10 մլն. մ^3 պոչանք:

Չգործող և ռեկուլտիվացված պոչամբարներ. չգործող և ռեկուլտիվացված պոչամբարները գտնվում են Որոտանի և Ողջիի գետավազաններում: Համաձայն Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրամադրած տվյալների՝ 2023թ. նոյեմբերի դրությամբ, Դաստակերտի պղնձամոլիբդենային կոմբինատի չգործող և ռեկուլտիվացած պոչամբարը զբաղեցնում է 30 հա տարածք և լցված է 1.5 մլն. մ^3 թափոններով: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին պատկանող Ողջիի գետավազանի՝ Ողջիի, Փխրուտի և Դարազամի ռեկուլտիվացված պոչամբարները ժամանակի ընթացքում տեղումների հետևանքով ակոսացվել են, ինչպես նաև տարածքում խողովակաշարեր անցկացնելու արդյունքում պոչամբարների մակերևույթին առաջացել են առուներ ու փլվածքներ:

Զբոսաջրջություն. Հարավային ՋԿՏ-ում առկա է զգալի զբոսաշրջային ներուժ: Այն հարուստ է գեղատեսիլ բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հուշարձաններով, բուժիչ ջրաղբյուրներով և ենթակառուցվածքներով: Այստեղ են գտնվում Կապուտջուղը (3904 մ), Խուստուփ լեռը (3214 մ), Բարգուշատի լեռնաշղթայի գեղատեսիլ բարձունքները՝ Աճանան (Տափասար) լեռը (2393 մ), Կատարը (3012

մ) և այլն: ՋԿՏ-ն առատ է նաև ստորերկրյա քաղցրահամ, հանքային թերմալ ջրերով, որոնցից են Սիսիան-Ուռուտյան, Լիճք-Տաշտունյան, Քարաշեն-Խոզնավարյան հանքային աղբյուրները, «Քաջարան» թերմալ ջուրը, որը «Ջերմուկի» նմանօրինակն է:

Հարավային ՋԿՏ-ում վերջին տարիներին զգալի ակտիվացել է հյուրատնային սպասարկման ոլորտը, գրեթե կրկնապատկվել է զբոսաշրջիկների թիվը: ՋԿՏ-ի ներկայիս զբոսաշրջային ներուժն ամեն տարի կարող է ընդունել և սպասարկել մոտ 6000 և ավելի զբոսաշրջրիկ: Այստեղ զբոսաշրջության, ներառյալ էկոտուրիզմի զարգացման համար նշանակալի և գլխավոր դեր են խաղում Տաթևի վանական համալիրը, «Տաթևի թևեր» ճոպանուղին, Քարահունջի աստղադիտարանը, աշխարհի ամենախոշոր բնական սոսիների ռելիկտային պուրակը՝ Ծավ գետի կիրճում, Վահանավանքը (X-րդ դար)՝ պատմական Սյունիքի հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը, «Շիկահող» պետական արգելոցը, «Արևիք» ազգային պարկը:

Աղբավայրեր. Հարավային ՋԿՏ-ում գործում են Կապանի, Գորիսի, Սիսիանի, Մեղրիի և Ագարակի կենցաղային և այլ թափոնների աղբավայրերը: Սիսիան քաղաքից 1 կմ դեպի արևելք՝ Ույծ համայնքում գտնվող աղբավայրը Որոտան գետից 300 մ հեռավորության վրա է, իսկ Գորիս քաղաքի աղբավայրը գտնվում է 1 կմ քաղաքից դեպի հարավ արևելք՝ Գորիս գետից 600 մ հեռավորության վրա: Գորիսի 10 հա նախագծային մակերեսով աղբավայրի միայն 4.5 հա է ծածկված աղբով:

Կապանի աղբավայրը գտնվում է քաղաքից 5 կմ դեպի արևելք՝ Սյունիք համայնքում, Ողջի գետից 300 մ հեռավորության վրա: Աղբավայրի նախագծային մակերեսը կազմում է մոտ 13 հա, որից աղբով ծածկված է 4.3 հա:

Ռեկրեացիոն տարածքներ. Սյունիքի մարզի ռեկրեացիոն գոտիները և բնական ջրագրական հուշարձաններն են՝ «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկի ռեկրեացիոն գոտի, Գազանա («Զանգեզուր» արգելավայր) , Կապույտ լճեր («Արևիք» ազգային պարկի) «Սատանի կամուրջ» բնական կամուրջ, «Ջրաղացի» աղբյուրներ, «Ծործոր» աղբյուրներ, «Շաքիի» ջրվեժ, Սբ. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիր, «Կապուտջուղ» ջրվեժներ, «Կապուտան» (Գոգի) լիճ, «Ծաղկարի» լիճ, «Անապատի» աղբյուր, «Սմբուլի» աղբյուր, «Վարդանաձորի» աղբյուրներ, Դավիթ Բեկի ջրամբար, Տոլորսի ջրամբար, Շամբի ջրամբար, Կարճևանի ջրվեժ, Բողաքարի ջրվեժ և Լիճքի ջրվեժները, Ողջի գետի վրա Քաջարան բնակավայրի մոտ Թթուջուր աղբյուրը և Սիսիան գետի ափը՝ Աշոտավան բնակավայրի մոտ:

Հիմնվելով ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման վրա՝ թիրախավորում է մակերևութային ջրերում նիտրատի կոնցենտրացիայի 11մգ/լ առավելագույն արժեքը: Ստորերկրյա ջրերի որակի նորմերի բացակայության պատճառով՝ նույն նորմատիվային արժեքը կիրառվել է նաև ստորերկրյա ջրերի դեպքում: Համաձայն գնահատման արդյունքների՝ նշված նորմատիվային արժեքը պարբերաբար գերազանցվել է՝ Որոտանի գետավազանի N1175 (բն. Անգեղակոթ) և N537 (բն.Սպանդարյան) դիտահորերում: Հարավային ՋԿՏ-ում ԵՄ Նիտրատների դիրեկտիվով սահմանված արժեքի (50 մգ/լ)

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

գերազանցման ոչ մի դեպք չի գրանցվել: Նիտրատների խոցելի տարածքների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով հասանելի է http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6 հղումով:

Սանիտարական պահպանման տարածքներ. Հարավային ՋԿՏ-ում աղբյուրների և ՕԿՋ-ների համար առանձնացվել է ջրաէկոհամակարգերի 79 սանիտարական պահպանման տարածք՝ 2.01 կմ² ընդհանուր մակերեսով և կազմում է Հարավային ՋԿՏ-ի ընդհանուր մակերեսի մոտ 0.045 %-ը:

Հոսքի ձևավորման տարածքներ. Հարավային ՋԿՏ-ում տարանջատվել է 112 հոսքի ձևավորման տարածք՝ 929.14 կմ² ընդհանուր մակերեսով, որը կազմում է Հարավային ՋԿՏ-ի 20.7%-ը:

Ստորերկրյա ջրերի պահպանման տարածքներ. Հարավային ՋԿՏ-ում 121 հորատանցքի և 472 աղբյուրի համար առանձնացվել են ստորերկրյա ջրերի պահպանման տարածքներ՝ 38.69 կմ² ընդհանուր մակերեսով, որը կազմում է Հարավային ՋԿՏ ընդհանուր մակերեսի մոտ 0.86 %-ը:

Ջրապահպան գոտիներ. Հարավային ՋԿՏ-ում ջրապահպան գոտու մակերեսը կազմում է 31.89 կմ² և կազմում է Հարավային ՋՏԿ-ի մոտ 0.71 %-ը:

Էկոտոն. Հարավային ՋԿՏ-ում առանձնացվել է գետերի 11 էկոտոնի տարածք՝ 1.711 կմ² ընդհանուր մակերեսով, ինչը կազմում է Հարավային ՋԿՏ ընդհանուր մակերեսի մոտ 0.038 %-ը:

Անօտարելի գոտիներ. Հարավային ՋԿՏ-ում 11 ջրանցքի երկայնքով առանձնացվել են 10 մ լայնությամբ անօտարելի տարածքներ: 6 խոշոր ջրամբարի պատվարների համար անօտարելի գոտին սահմանվել է 100 մ: Անօտարելի գոտիների ընդհանուր մակերեսը կազմում է 3.277 կմ² և կազմում է Հարավային ՋԿՏ-ի մոտ 0.073 %-ը:

Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանման տարածքների, ջրապահպան գոտիների, էկոտոնի և անօտարելի գոտիների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով:

Ջրավազանի ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցություն. Հարավային ՋԿՏ-ում կլիմայական տարրերի փոփոխության միտումները գնահատելու համար օգտագործվել են ջրավազանում գործող 6 օդերևութաբանական կայանի՝ Որոտանի լեռնանցք, Գորիս, Սիսիան, Քաջարան, Կապան և Մեղրի օդի ջերմաստիճանի և տեղումների դիտարկումների տվյալների շարքերը:

Ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման հստակ մեթոդաբանություն առկա չէ: Ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը հնարավոր է եղել գնահատել ջրային հաշվեկշռի մեթոդով: Կլիմայի փոփոխության պայմաններում գնահատված մթնոլորտային տեղումների, գոլորշիացման, բնական հոսքի և մակերևութային հոսքի փոփոխությունների արժեքներից

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

հաշվարկվել է ստորերկրյա ջրային ռեսուրսների փոփոխությունը:

Ռիսկի գնահատում և բնապահպանական նպատակներ. Հարավային ՋԿՏ-ի մակերևութային և ստորերկրյա ջրային մարմինների համար ռիսկի գնահատումն իրականացվել է ճնշում-ազդեցություն վերլուծության արդյունքների, հիդրոլոգիական, ֆիզիկաքիմիական և հիդրոմորֆոլոգիական ցուցանիշների գնահատման հիման վրա: Հարավային ՋԿՏ-ում մակերևութային ջրերի կենսաբանական մոնիթորինգի տվյալների բացակայության պատճառով կենսաբանական տարրերի համար հնարավոր չի եղել որոշել ռիսկի գնահատման ցուցանիշներն ու չափանիշները: Ստորերկրյա ջրերի ռիսկի գնահատումը ևս հիմնված է քանակական և ֆիզիկաքիմիական բնութագրերի վրա:

Մակերևութային ջրերի ռիսկի գնահատում. հարավային ՋԿՏ ռիսկային ջրային մարմինների (այսուհետ՝ ՌՋՄ) հատկորոշումն իրականացվել է բացահայտված էական ճնշումների և ազդեցությունների վերլուծության արդյունքների հիման վրա: Արդյունքում, Հարավային ՋԿՏ-ում առանձնացվել են 35 ռիսկային ջրային մարմիններ:

Ապագա ենթակառուցվածքների զարգացում. Սյունիքի մարզի տարածքային զարգացման ռազմավարության նպատակն է ունենալ զարգացած արդյունաբերություն, ժամանակակից պահանջներին համապատասխան կեղտաջրերի հեռացման օրենսդրություն և ցանց, հիդրոտեխնիկական կառուցվածքների արդիականացում ոռոգման նպատակով և գյուղատնտեսության զարգացում, զարգացած զբոսաշրջություն:

Մարզի առանցքային նպատակներից մեկն է հանդիսանում գյուղատնտեսական զարգացումը, ջրային ռեսուսների կուտակումը, հոսքակորուստների նվազեցումը, ոռոգման ցանցի արդիականացումը, ինչպես նաև նորերի կառուցումը: Մարզը ձգտում է ունենալ գյուղատնտեսության ժամանակակից տեխնիկա, տեխնոլոգիաներ և լավագույն փորձ: Այն ներառում է արդյունավետ ոռոգման մեթոդների ընդունում, հողօգտագործման օպտիմալացում և կայուն գյուղատնտեսական գործընթացների իրականացում:

Հարավային ՋԿՏ-ում ջրային ռեսուսների արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է գործող հիդրոտեխնիկական ենթակառուցվածքների վերանորոգում և վերազինում, ինչպես նաև ջրի կուտակում՝ նոր ջրամբարների կառուցմամբ:

ՀՀ կառավարության գործունեության ծրագրով Սյունիքի մարզում նախատեսվում է կառուցել Լիճքի ջրամբարը՝ մոտ 3.2 մլն. մ^3 ծավալով:

Քաղաքային կեղտաջրերի արտահոսքը Հարավային ՋԿՏ-ում 2023թ-ի հունվարի դրությամբ կազմել է տարեկան շուրջ 9 մլն մ^3: Ջրավազանում կենցաղային կեղտաջրերի 90-95 % չեն մաքրվում և անմիջապես թափվում են հարակից գետեր, ջրանցքներ, դրենաժային ջրեր: Հարավային ՋԿՏ-ում կոյուղաջրերի հեռացման կենտրոնացված համակարգ ունեն Գորիս, Սիսիան, Կապան, Քաջարան, Մեղրի և Ագարակ քաղաքները, որտեղ կեղտաջրերը հեռացվում են ջրահեռացման կենտրոնացված ցանցերի և գլխավոր կոլեկտորների միջոցով՝ ապահովելով քաղաքների տարածքից 60-80 % կեղտաջրերի հեռացումը: Քաղաքների կոյուղու ցանցերը վերանորոգման կարիք ունեն: Դրանք հնամաշ են և 40-50 տարվա վաղեմության:

Քաղաքային կոյուղաջրերի ազդեցությունը դիտարկվել է որպես կետային ճնշում: Քաղաքային համայնքներից արտանետումների ընդհանուր մասնաբաժինը Ողջիի և Մեղրիգետի գետավազանների դեպքում կազմում է շուրջ 83 %, իսկ Որոտանի գետավազանում՝ 50 %: Քաղաքային կեղտաջրերի զգալի մասը կոյուղու ցանցով հոսում է անմիջապես հարակից գետը և չի անցնում մաքրում՝ կեղտաջրերի մաքրման կայանների բացակայության պատճառով, իսկ մյուս մասը հանդես է գալիս որպես ոչ կետային, ցրված աղտոտում: Գյուղական համայնքների ներդրումը կազմում է 15-18 % (Որոտանի գետավազանում՝ 50 %)՝ հանդիսանալով որպես ոչ կետային, ցրված աղտոտվածության աղբյուր:

Կետային աղբյուրներից քաղաքային կեղտաջրերը զգալի ճնշում են գործադրում Որոտան գետի՝ Սիսիան քաղաքից մինչև Շամբի ջրամբար, Սիսիան գետի՝ Տոլորսի ջրամբարից մինչև գետաբերան, Գորիս գետի՝ Գորիս քաղաքից մինչև ՀՀ սահման, Ողջի գետի՝ Քաջարան և Կապան քաղաքներից մինչև ՀՀ սահման, Վաչագան գետի՝ Կապան քաղաքից մինչև գետաբերան, Մեղրիգետի՝ Մեղրի քաղաքից մինչև գետաբերան, Կարճևան գետի՝ Ագարակ քաղաքից մինչև գետաբերան ընկած հատվածները:

Սննդի և ոչ սննդի արդյունաբերությունից ջրահեռացում. սննդի արդյունաբերական ձեռնարկությունները էական ճնշում են գործադրում Հարավային ՋԿՏ-ի ջրային ռեսուրսների որակի վրա: Ոչ սննդի արդյունաբերությունից կեղտաջրերի հեռացումը էական ճնշում չի գործադրում ջրի որակի վրա:

Հանքարդյունաբերությունից ջրահեռացում. Հարավային ՋԿՏ-ում գործող հանքարդյունաբերական տարածքներն ընկած են հիմնականում Ողջիի և Մեղրիգետի գետավազաններում՝ «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ և «Լեռ-Էքս» ՍՊԸ: Հանքարդյունաբերական գործունեությունից առաջացած կեղտաջրերի հեռացումը կենտրոնացված է և հանքանյութի լվացումից առաջացած պոչանքները խողովակաշարերով հեռացվում են պոչամբարներ: Սակայն, պարբերաբար խողովակաշարերի վթարների արդյունքում առաջանում են արտահոսքեր, որի հետևանքով թափոնաջրերը ներթափանցում են անմիջապես գետեր և ստորերկրյա ջրաղբյուրներ՝ աղտոտելով դրանք հանքարդյունաբերական թափոններով, ծանր մետաղներով: Հարավային ՋԿՏ-ում հանքարդյունաբերությունից կեղտաջրերի հեռացումը էական ճնշում է գործադրում ջրային ռեսուրսների ջրի որակի վրա:

Գյուղատնտեսական մշակաբույսերի մշակում և պարարտանյութերի օգտագործում. Հարավային ջրավազանում գյուղատնտեսության մեջ զգալի տոկոսը բաժին է ընկնում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբուծությանն ու այգեգործությանը: Ըստ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կողմից տրամադրած տվյալների, 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հարավային ՋԿՏ-ում ընդհանուր առմամբ օգտագործվել է 19850 տոննա օրգանական պարարտանյութ, որով մշակվել է 992.5 հա հողատարածք, 543.92 լ թունաքիմիկատներ՝ մշակվել է 6199 հա հողատարածք:

Ազոտական հիմքով հանքային պարարտանյութերի օգտագործված քանակը կազմել է 939.6 տոննա՝ 3131.4 հա հողատարածքի համար, որը համապատասխանել է սահմանված նորմին (ըստ նորմի 1 հա մշակաբույսերի մշակման համար պահանջվում է 300 կգ ազոտական պարարտանյութ): Պարարտանյութերի օգտագործումը եղել է սահմանված նորմերի ստույգ չափաքանակի մեջ (1 հա համար ծախսվել է մարզպետարանի կողմից տրամադրված 300 կգ ազոտական հիմքով հանքային պարարտանյութ): Հարկ է նշել, որ չի հաշվառվում անհատ ֆերմերների կողմից ազոտական պարարտանյութերի լրացուցիչ քանակների օգտագործումը, որոնց պարագայում արդեն իսկ կգերազանցվի սահմանված նորմը: Այդ մասին են վկայում նաև Հարավային ՋԿՏ-ում մակերևութային և ստորերկրյա ջրերում նիտրատ իոնի կոնցենտրացիաների գնահատման արդյունքները և նիտրատներից խոցելի տարածքների վերհանումը:

Որոտանի գետավազանի միջին և ստորին հատվածները մեծամասամբ ազդեցություն են կրում գյուղատնտեսական ցրված աղտոտումից: Որոտանի և Գորիսգետի ավազանների ջրի որակի գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ Հարավային ՋԿՏ-ում նկատվում է նիտրատ իոնների կոնցենտրացիայի աճ գետերի միջին և ստորին հոսանքներում, որն առաջանում է ավազանի վարելահողերից հետադարձ հոսքերի աղտոտման հետևանքով, հողերի չափից շատ պարարտացնելու ժամանակ:

Անասնաբուծություն. արոտավայրերը զբաղեցնում են Հարավային ՋԿՏ-ի գյուղատնտեսական հողերի մեծ մասը: Ջրավազանում գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է, որտեղ գերակշռողը մանր և խոշոր եղջերավոր անասնապահությունն է: ՋԿՏ-ում 2024թ-ի հունվարի 1-ի դրությամբ հաշվարկվում է շուրջ 94986 մանր (այդ թվում նաև խոզերը) և 36884 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Ֆերմաների տարածքում գոմաղբի լվացումից առաջացած կեղտաջրերը հոսում են գետեր կամ ներթափանցում ստորերկրյա ջրեր՝ աղտոտելով ջրային ռեսուրսները ազոտով, ֆոսֆորով և այլ օրգանական միացություններով: ՋԿՏ-ում 2023թ.-ի դրությամբ անասնաբուծությունից ազոտի և ֆոսֆորի տարեկան արտանետումները հաշվարկվել են՝ ելնելով մեկ շնչին ընկնող անասունի և գոմաղբի քանակից: Հարավային ՋԿՏ-ում գյուղատնտեսությունից՝ մասնավորապես անասնապահությունից, տարեկան առաջանում է մոտ 1137.3 տ ազոտ:

Կոշտ թափոններ. Հարավային ՋԿՏ-ի աղբավայրերը, բացի Մեղրի քաղաքից, գտնվում են անմխիթար վիճակում, չեն պահպանվում սանիտարական նորմերը՝ չկա ցանկապատում, չի կատարվում անհրաժեշտ վարակազերծում: Չնայած իրենց անմխիթար վիճակի, աղբավայրերը տեղակայված են մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսներից հեռու և ջրերի որակի վրա էական ազդեցություն չեն գործադրում:

Հարավային ՋԿՏ-ի բնակավայրերով անցնող գետերի հունը որոշ տեղերում չափազանց աղտոտված է կենցաղային պինդ թափոններով: 2023թ. նոյեմբերի դրությամբ այդ հատվածներն են.

- Որոտան գետը՝ Սիսիան քաղաքի սահմաններում,

ՀՀ ՍԵՆԵԱԿԱՅԻՆ ՄԱՍ ՍՏՈՒԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE 05543163 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- Սիսիան գետի գետաբերանը՝ Ույծ համայնքի տարածքում,
- Գորիսգետը՝ Վերիշեն ու Քարահունջ համայնքների միջև,
- Ողջի գետը՝ Քաջարան և Կապան քաղաքների սահմաններում,
- Մեղրիգետը՝ Մեղրի քաղաքի տարածքում,
- Կարճևան գետը՝ Ագարակ քաղաքի տարածքում և մինչև գետաբերան:

Նշված հատվածներում կենցաղային պինդ թափոններն էական ճնշում են գործադրում ջրային ռեսուրսների վրա:

Ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգի ոչ բավարար դիտացանցի և տվյալների սակավության պատճառով անհնար է եղել գնահատել պինդ թափոնների ճնշման ազդեցությունը ջրավազանի ստորերկրյա ջրային ռեսուրսների որակի վրա:

Հարավային ՋԿՏ-ի 3 բնակավայրում՝ Խնձորեսկ, Անգեղակոթ և Տեղ, կոմունալ-կենցաղային և անասնապահական կեղտաջրերի մաքրում կենսաբանական մաքրման լճակների կառուցման ծախսերի գնահատումը կատարվել է Փարաքարի համայնքում կառուցված մաքրման լճակի տվյալների հիման վրա՝ 10000 բնակչի հաշվով:

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգի գոյություն ունեցող ցանցը բավարար չէ նիտրատներից խոցելի տարածքների բացահայտման համար: Այնուամենայնիվ Հարավային ՋԿՏ-ում մակերևութային և ստորերկրյա ջրերում նիտրատ իոնի կոնցենտրացիաների գնահատման արդյունքներն և գյուղատնտեսությունից արտանետվող ազոտի քանակության վերլուծությունը ցույց է տալիս, որ Որոտանի գետավազանի (Որոտան և Գորիսգետ գետեր) միջին և ստորին հատվածները մեծամասամբ ազդեցություն են կրում գյուղատնտեսական ցրված աղտոտումից և գետավազանի այդ հատվածները կարող են առանձնացվել որպես նիտրատներից հնարավոր խոցելի տարածքներ:

Նիտրատներից խոցելի տարածքների ճշգրիտ գնահատման համար անհրաժեշտ է մշակել մեթոդաբանություն և այդ տարածքների հայտնաբերման համար նոր դիտացանց ստեղծել: Դրա համար անհրաժեշտ է իրականացնել առանձին համապարփակ հետազոտություն նիտրատներից խոցելի տարածքների հայտնաբերման համար, որի արդյունքում կհավաքագրվի անհրաժեշտ տեղեկատվություն և կմշակվի համապատասխան նոր դիտացանց:

Գործող և ռեկուլտիվացված պոչամբարներում առաջարկվող միջոցառումները.

- Ողջիի, Փխրուտի և Դաստակերտի ռեկուլտիվացված պոչամբարների քայքայված տարածքների (համապատասխանաբար՝ 21 հա, 5 հա և 4 հա) ծածկում կավե, այնուհետև՝ հողային շերտով և բուսածածկում,
- Կիշկոշտ գետի՝ Դաստակերտի չշահագործվող պոչամբարի տարածքով անցնող հատվածի (մոտ 340 մ) հոսքի ուղղորդում 1400 մմ տրամագծով ածխամանրաթելային խողովակով,
- Ողջիի գետավազանում «Լեռ-Էքս» ՍՊԸ–ի (առաջացած բնապահպանական խնդիրների

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

լուծման պատճառով ներկայում գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է) մոտ 35000 մ^3 ծավալով հանքարդյունաբերական պարզարանի տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացում՝ պոչամբարի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով,

- Հարավային ՋԿՏ-ում ջրային ռեսուրսների և շրջակա միջավայրի պահպանության նպատակով Արծվանիկի, Գեղանուշի, Դարազամի, «Հովիտ 1» և «Հովիտ 2» գործող պոչամբարների տեխնիկական շահագործման կանոնների պահպանում,
- Գեղիի և Նորաշենիկի գետավազաններում ջրային ռեսուրսն աղտոտող Արծվանիկի պոչամբարի պոչանքները տեղափոխող վնասված խողովակաշարերի ընդհանուր մոտ 120 գծմ. երկարությամբ հատվածի վերանորոգում, որից՝ Գեղիի գետահովտի հատվածում՝ մոտ 70 գծմ., իսկ Նորաշենիկի գետահովտի հատվածում՝ 50 գծմ.,
- Կարճևանի գետավազանում Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչանքները դեպի «Հովիտ 1» և «Հովիտ 2» պոչամբարներ տանող խողովակաշարերի մոտ 60 գծմ. վնասված հատվածների վերանորոգում,
- Արծվանիկի պոչամբարից դեպի Աճանանի գետավազան դուրս եկող թունելի վրա արտադրական ջրերի մաքրման փոքր կայանի տեղադրում,
- «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ի արտադրական ջրերի փակ շրջանառու համակարգի ստեղծում և մաքրման կայանի տեղադրում:

Հանքարդյունաբերությունից հեռացվող կեղտաջրերի որակն ըստ սահմանված նորմերի բարելավելու նպատակով առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- կեղտաջրերում տոքսիկ նյութերի պարունակությունը ՋԹ-ով սահմանված նորմերին համապատասխանեցնելու նպատակով նոր տեխնոլոգիաների ներդրում արտանետվող արտադրական կեղտաջրերի մաքրման համար, մասնավորապես հետևյալ հատվածներում՝
- Ողջի և Նորաշենիկ գետեր (տարեկան 31 մլն մ^3 արտանետում)՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից,
- Նորաշենիկ գետ (տարեկան 25.23 մլն մ^3)՝ «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից,
- Կարճևան գետ (տարեկան 1.5 մլն մ^3)՝ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից,
- Մեղրիգետ (տարեկան մոտ 0.11 մլն մ^3)՝ Լիճքվազ-Թեյի և Տերտերասարի ոսկու ստորերկրյա փոքր հանքերը շահագործող «Սիփան-1» ՍՊԸ-ի կողմից:

Հարավային ՋԿՏ-ում գործում են Սիսիան (2 հա), Գորիս (5 հա), Կապան (13 հա), Ագարակ (3 հա) և Մեղրի (2 հա) քաղաքների կենցաղային թափոնների աղբավայրերը, որոնք գտնվում են անմխիթար վիճակում, չեն պահպանվում սանիտարական նորմերը՝ չկա ցանկապատում, չի կատարվում անհրաժեշտ վարակազերծում: Քաջարան քաղաքի աղբահեռացումը կատարվում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի դատարկ ապարների լցակույտերում, որոնք ընկերության կողմից ծածկվում են

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

հողաշերտով: Հաշվի առնելով վերոնշյալը, Քաջարան քաղաքի աղբավայրի համար լրացուցիչ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն չի առաջանում:

Հարավային ՋԿՏ-ում պինդ թափոնների տեղաշարժը, տարածումը և շրջակա միջավայրի աղտոտումը սահմանափակելու համար արդյունավետ միջոցառումներ՝

1. թափոնների վերամշակման փոքր կայանների կառուցում
2. վերը նշված գործող աղբավայրերի փոխարինում սանիտարական աղբավայրերով, ինչն ավելի իրատեսական է և քիչ ծախսատար:

Առաջարկվում է կոնսերվացնել Սիսիան, Գորիս, Կապան, Ագարակ և Մեղրի քաղաքների գործող աղբավայրերը և դրանք փոխարինել սանիտարական աղբավայրերով: Կոնսերվացման նպատակով աղբավայրերը պետք է ծածկել կավային շերտով (մինչև 20 սմ հաստությամբ), հողային շերտով (30 սմ), այնուհետև՝ բուսածածկով:

Աղբավայրերի համար հատկացված տարածքում անհրաժեշտ է ստեղծել սանիտարական աղբավայրեր: Որպեսզի աղբավայրը համարվի սանիտարական, այն պետք է բավարարի հետևյալ չորս հիմնական պայմանին.

3. ամբողջական կամ մասնակի հիդրոերկրաբանական մեկուսացում. եթե աղբավայրը չի կարող տեղակայվել այնպիսի հողի վրա, որը բնական պայմաններում ապահովում է կեղտաջրերի մեկուսացում, ապա պետք է բերվեն լրացուցիչ հատուկ նյութեր, որոնք կկրճատեն հարակից հողերի աղտոտումը և կեղտաջրերի ներթափանցումը հողային շերտ և ստորերկրյա ջրեր: Եթե հողային կամ սինթետիկ մեկուսիչ շերտը տրամադրվում է առանց կեղտաջրերի հավաքման համակարգի, ապա բոլոր կեղտաջրերը, վերջիվերջո, թափվելու են շրջակա միջավայր: Կեղտաջրերի հավաքումը և մաքրումը պետք է շեշտվի որպես առանցքային պահանջ,
4. ֆորմալ ինժեներական նախապատրաստություններ. նախագծերը պետք է հաշվի առնեն տեղանքի երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտությունների արդյունքները: Պետք է նաև մշակել կենցաղային թափոնների թաղման և տեղանքի վերջնական վերականգնման ծրագրեր,
5. մշտական վերահսկում. սանիտարական աղբավայրում պետք է ներկա գտնվի վերապատրաստված անձնակազմ՝ վերահսկելու տեղանքի նախապատրաստման և շինարարության, թափոնների թաղման, ինչպես նաև սանիտարական աղբավայրի շահագործման և պահպանման առօրյա աշխատանքները,
6. թափոնների պլանավորված թաղում և ծածկում. աղբը պետք է բաշխվի շերտերով և տոփանվի: Փոքր աշխատանքային տարածքը, որն ամեն օր ծածկվում է հողաշերտով, սահմանափակում է թափոնների տարածումը և մատչելի լինելը վնասատուների և մակաբույծների համար:

Նախքան կենցաղային թափոնները սանիտարական աղբավայրում տեղակայելը, տարածքը ծածկվում է պոլիմերային հատուկ շերտով (նպատակահարմար է օգտագործել LDPE (low density polyethylene) կամ HDPE (high density polyethylene) գեոմեմբրաններ՝ առավել հուսալի մեկուսացման համար): Այնուհետև, տեղադրվում է թափոնների 2 մ

շերտ, որն էլ իր հերթին ծածկվում է կավի 20-25 սմ շերտով: Հաջորդ շերտը դրվում է նույն կերպ: Երբ սանիտարական աղբավայրը հասնում է իր առավելագույն նախագծված հզորության, այն կոնսերվացվում է. կավի վերին շերտը ծածկվում է բուսականության 30-40 սմ շերտով, իսկ տարածքը կանաչապատվում է: Այսպիսով, առաջարկվում է գոյություն ունեցող երկու աղբավայրերը դարձնել սանիտարական աղբավայրեր:

Առաջարկվում է նաև իրականացնել թափոնների կրճատման, վերաօգտագործման (օրինակ՝ վերաօգտագործվող շշեր) և վերամշակման հնարավորինս շատ միջոցառումներ:

Հարավային ՋԿՏ-ում բնակավարերում չկազմակերպված կենցաղային աղբահանման արդյունքում կոշտ թափոններով գետահուների աղտոտումն էական ճնշում է գործադրում գետերի ջրերի որակի վրա, առաջարկվում է իրականացնել աղբարկղերի տեղադրում համապատասխան վայրերում և աղբահանության արդյունավետ կառավարում, ինչպես նաև կազմակերպել գետահուների մաքրում պինդ թափոններից:

Առաջարկվում են լրացուցիչ միջոցառումներ, այդ թվում ֆինանսավորում չպահանջող՝

1. Որոտան գետի վերին հոսանքներում հոսքի ձևավորման տարածքի պահպանման նպատակով առաջարկվում է ՀՀ ՇՄՆ կառուցվածքում «Որոտան պետական հիդրոլոգիական արգելոց» ՊՈԱԿ-ի ստեղծում և կարողությունների հզորացում,
2. Ողջի և Մեղրիգետ գետերի վերին հոսանքներում հոսքի ձևավորման տարածքների պահպանման նպատակով ՀՀ ՇՄՆ «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կառուցվածքում «Ողջի պետական հիդրոլոգիական արգելոցի» և «Լիճք հիդրոլոգիական պետական արգելոցի» ստեղծում և կարողությունների հզորացում,
3. Հարավային ՋԿՏ-ում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների վերաբերյալ վաղ ահազանգման և արագ արձագանքման համակարգի ներդրում և բարելավում՝ սողանքների, սելավների և հեղեղումների վերահաս վտանգների մասին համայնքներին նախազգուշացնելու նպատակով,
4. Հարավային ՋԿՏ-ի գետավազաններում, տարվա սակավաջուր ամիսներին ջրապահանջարկը բավարարելու և դիֆիցիտը մեղմելու նպատակով, ազատ ջրահոսքի կուտակման հնարավոր քանակության ուսումնասիրում,
5. գետերում էկոլոգիական կարգավիճակի բարելավման նպատակով ջրային մարմիններում բնապահպանական թողքի պահպանում՝ հսկողության մեխանիզմների ներդրմամբ,
6. գետերի էկոլոգիական կարգավիճակի բարելավում, մասնավորապես՝ ըստ ամիսների բնապահպանական թողքի պահպանում և ջրօգտագործման վերահսկում,
7. պոչամբարներում առկա նյութերի աստիճանի որոշում,
8. SCADA համակարգում ջրօգտագործման տվյալների ստացման և մշակման ու Ջրային ռեսուրսների կադաստր տվյալների փոխանցման ծրագրի ստեղծում,
9. ջրօգտագործողների հաշվետվողականության բարձրացում, որի նպատակն է ստանալ

հստակ տվյալներ փաստացի ջրօգտագործման, կեղտաջրերի հեռացման և ջրային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ,

10. Գյուղատնտեսական մշակաբույսերը. գյուղատնտեսության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է բնական ռեսուրսների (հող, ոռոգման ջուր և այլն) ռացիոնալ օգտագործում՝ ներդնելով գյուղատնտեսության վարման օրինակելի մեթոդներ (ԳՎՕՄ) և ստանալով արդյունավետ ֆերմերային տնտեսություն:

Ջրային ռեսուրսների որակի վրա անասնապահական ֆերմաների սպանդանոցների հետադարձ հոսքերի ճնշման մեղմման համար առաջարկվում է դրանց կոյուղացում և կեղտաջրերի մաքրման տեղային փոքր կայանների տեղադրում՝ մինչև հարակից գետ թափվելը դրանց մաքրումն ապահովելու նպատակով:

Վերոնշյալ միջոցառումներն իրականացնելու համար առաջարկվում է Որոտանի գետավազանի 3 (Անգեակոթ, Վերիշեն և Տաթև), Ողջիի գետավազանի 2 (Գեղի և Արծվանիկ) և Մեղրիգետի գետավազանի 1 (Տաշտուն) պիլոտային բնակավայրի համար մշակել անասնապահության վարման օրինակելի ձևերի ուղեցույց, անցկացնել ֆերմերների համապատասխան վերապատրաստում և կիրառել անասնապահության վարման օրինակելի ձևեր՝ աստիճանաբար ներդնելով համաշխարհային առաջավոր փորձը Հարավային ջրավազանի տարածքում:

Հարավային ՋԿՏ-ում արտակարգ իրավիճակներ առաջացնող գործոնների կանխորոշմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներն իրականացվում են «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համաձայն:

Արտակարգ իրավիճակների կանխարգելման նպատակով առաջարկվում է .

- հիդրոտեխնիկական կառուցվածքների հակահրդեհային միջոցառումների ապահովում,
- հիդրոտեխնիկական կառուցվածքների օտարման գոտիներում կողմնակի անձանց մուտքն արգելող կառույցների ապահովումը,
- հեղեղումների և սելավների բերվածքների կուտակման, հեռացման և լվացման գործընթացների ապահովում,
- խմելու և ոռոգման նպատակով պահանջվող ջրի որակի, մեխանիկական համակարգերում պահուստային պոմպի ապահովում, ինչպես նաև սանիտարական գոտու պահպանում,
- կլիմայի փոփոխության ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության լայն տարածումը և հարմարվողականության տեխնոլոգիաների հասանելիության ապահովում՝ ուղղված ՋԿՏ-ում կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության ներուժի բարձացմանը:

Պատճառաբանական մաս. Անդրսահամանային և սահմանամերձ ջրային ռեսուրսների անվտանգ օգտագործման համար անհրաժեշտ է սահմանային

ՀՀ ԱՆՇԱՐԺԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERT
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ * РА ЕРЕВАН * ONG * YEREVAN

հատվածներում իրականացնել ջրի որակի, քանակի մոնիթորիգ և ուսումնասիրել մոնիթորիգային նոր դիտակետերի անհրաժեշտությունը, խմելու և ոռոգման խնդիրների լուծման ուղիների միջոցառումների մշակում, կրճատել ջրակորուստները, սահմանամերձ բնակավայրերում վերանորոգել խմելու ջրի ներքին ցանցը կամ ամբողջական վերազինել գործող ոռոգման ենթակառուցվածքները:

ՌԷԳ հաշվետվության փաստաթղթերի մշակման նախագծի հիմնավորումը նպատակաուղղված է Հարավային ՋԿՏ-ի, որպես ամբողջական միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը:

Շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել առկա խնդիրները: ՌԷԳ հաշվետվությունում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները: Հարավային ՋԿՊ-ի մշտադիտարկումների բաժնում, առաջարկվում է ջրային ռեսուրսների մոնիթորինգի համակարգում մակերևութային ջրերի էկոլոգիական վիճակի գնահատման հիդրոկենսաբանական մոնիթորինգային դիտարկումների իրականացում:

Փորձաքննության ընթացքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ երկրորդ հանրային լսումը կազմակերպվել է ՇՄՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ում:

Փորձաքննական ամբողջ գործընթացին և հանրային լսմանը ներգրավվել են ներքին գործերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, կադաստրի և ջրային կոմիտեները, Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը և «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտը», ոլորտի նեղ մասնագետները, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության բոլոր մասնագիտացված ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունները անհրաժեշտ է ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, մինչ գործունեության իրականացումը:

Եզրակացություն

«Հարավային ջրավազանային տարածքի 2025-2030թթ. կառավարման պլան» հիմադրույթային փաստաթղթի ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան